

“Droschak”

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse :

Rédaction du “Droschak”

GENÈVE (Suisse)

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՋՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

Մ Ա Ր Օ

(Օ.Ր. ՄԱՐԻԱՄ ՄԱԿԱՐԵԱՆ)

Ո՞վ էր նա Այդ հայ աղջիկն ի՞նչ գործ ուներ լուսաւոր կենդանւորից հետո իսկ վայրում ինչո՞ւ մեծ քաղաքների ուրախ կեանքը թողած՝ եկել սիրտ ու մարմին էր մաշում Տաճկաց սահմանին հարեւան մի գաւառում:

Հայրենիքի ազատութեան համար գործելու տենչանքն էր, որ հանգստութիւն չէր տալիս նրան:

Մարօն Կովկասի ծովափնայ քաղաքներից մէկումն էր ծնւել 1872 թ.: Նախապաշարած բարեկամների (ծնողներից զուրկ էր նա մանկութիւնից) կամքին հակառակ, ուսումը վերջացնելուց յետոյ թողնում է իր ծննդավայրը, դիմում է օտարութեան եւ իր նուրբ ուսերի վրայ է առնում հայ վարժուհու ծանր բեռը: Այստեղ տեղն ու ժամանակը չէ մի առ մի պատմել Մարօի մանկավարժական բեղմնաւոր գործունէութեան մասին, քանի որ միւս տեսակի գործունէութեան առջեւ առաջինը նուստնում է:

Թշուառ հայրենիքին ծառայելն էր Մարօի գլխաւոր հոգսը: Դեռ աշակերտական նստարանի վրայից նա իր հասակակից աղջիկներին հաւաքում, ընկերութիւններ էր կազմում, ժողովներում Բաֆֆիի գրած քերթի ընթերցանութեամբ վառում էր իր ընկերուհիների սրտերը արդար հայրենասիրութեամբ: Հաւաքում եւ հրատարակում էր ժողովրդական բերանացի երկերը: Իր գործունէութեան ծաւալը լայնացնում է նա, երբ թողնում է ուսումնարանը եւ իրեն մանկավարժական ասպարէզին նւիրում: Կովկասը նրան այլեւս չէ գոհացնում: 1894 թ. նա անցնում է Երասխը, որ աւելի մոտիկ լինի հայրենիքի այն մասին, որի արեւան հոտն այժմ մինչեւ երկինք է բարձրացել:

Պատերազմի դաշտում ընկած հերոս յեղափոխականի սիրագործութիւնների նկարագրութիւնը զարմացնում է ընթերցողին: Այդպիսիների գործը ընկնում է յեղափոխութեան երեսի վրայ: Իսկ աստուծի վրայ գործում են մշակներ, որոնց աշխատանքն աւելի համեստ է, աւելի փոքր է, բայց, կարելի է ասել, աւելի հոգի մաշող է, թէպէտ այդ մշակների գործունէութիւնն աչքի չէ դարձնում, բայց ար-

դիւնաւէտ է իրեն աղբիւրների մանր աշխատանք, աշխատանք, որ ծովի յատակից ամբողջ կղզիներ է բարձրացնում:

Յեղափոխական համեստ մշակ էր Մարօն: Նրա խելացի եւ կրակոտ խօսքերը լսողների մէջ եռանդ էին յարուցանում, եւ մինչեւ վերջին շունչը մնաց նա առաջադիմական յեղափոխական կեանքում (այժմ յեղափոխական-պահպանողականները քիչ չեն հայերի մէջ):

Տեղական կոմիտէի ամենաեռանդուն անդամներիցն էր: Յեղափոխական գործին նա նւիրել էր իր բոլոր ուժերով: Իր գործելու ծրագիրը լայն էր, պահանջները խիստ, ձեռնարկները բարձր: Բայց Մարօն չէր մեղաւարդ, որ իր ֆիզիքական կազմի պատճառով, ան զօր էր հետեւել իր հոգու բոլոր պահանջներին: Եւ նա անում էր, ինչ որ իր ուժերը թոյլ էին տալիս:

„Աղջկայ կոչումն է համեստութիւն, խաղաղութիւն, քաղցրութիւն

եւ պարզութիւն“, գրած է նրա յիշատակարանի առաջի երեսի վրայ: այս բոլոր յատկութիւնների հետ Մարօն եւ հերոսուհու սիրտ ուներ:

Դեկտեմբերի 28-ին ընկերները գրում են նրան իր անկողնի վրայ անշնչացած: Մահացու գնդակն անցել էր ուղիղ սրտից եւ մէջքից դուրս եկել: Կողքին ընկած էր իր սիրած ընկերուհիները: Խելացի, խոշոր, սեւ աչքերը յաւիտեան փակւած էին: Այլեւս չէր նայում նա իր սիրելի հերոս Բաբկէն Սիւնիի պատկերին, որ միշտ կախած ուներ մօտը պատից, այլեւս չէր տեսնում իր խօսքերով վառած եւ վրէժխնդրութեամբ լցրած փոքր խէչօի լուսանկարը ¹⁾: Մի կոոր թղթի վրայ



գրութիւն էր թողել նա:

„ . . . անձը զո՛հ դի՛ր Հայրենեաց սուրբ սեղանի վրայ, — դիմում է նա իր սիրած յեղափոխականին — Բաբկէն Սիւնիի նման լեցւի՛ր թունալից վրէժխնդրութեամբ եւ . . . ²⁾ կատարիր վերջին կտակս. դրանով միայն կը հանգստանան ոսկորներս գերեզմանի մէջ: Ես այնքան քաջութիւն ունեցայ, որ կարողացայ կրակի տալ քո ետեւից բոլոր նաւերը: Այսուհետեւ դու բոլորովին ազատ ես, գործի՛ր: Ներիր ինձ. բիւր համ-

1) Տես „Դրօշակ“ համար 1 1897 թ.

2) Առ այժմ այս տողերը անյարմար են հրատարակելու:

բոլորները Վերջին բարեկեցության բոլոր ընկերներին»:

Մ Ա Ր Օ

Պարզ օր է: Արեւն այրելու չափ տաքացնում է, չնայած որ ամենուրեք ձեռն սպիտակ սաւանը ծածկած էր հաստ շերտով: Զանգակները տխուր հնչում են: Գիւղի տղամարդիկ ու կանայք շրջապատել են մի կարմիր դադաղ, որը հայդուկները տանում են դէպի բլուրի գագաթը՝ գերեզմանատուն: Սկսած հսկայ Արտոսից մինչեւ Կովկասը ներկայացուցիչ ունէր նրանց մէջ՝ քէօլօզաւոր, չուր-քեաւ-զախաւոր, փաստակաւոր, չուխաւոր՝ յուզարկաւորում են իրենց սիրելի «Դադօին», որն այնքան քրտինք է թափել եւ նեարդներ մաշել Հայրենիքի հայդուկ-զինուորների համար: Սրանք զգում են, որ իրենց զոհւած քրոջ տեղը ոչ ոք չէ բռնելու: Արցունքն առատ թափւում է խորշացած կրեսի վրայ եւ կոշտացած բռունցքն անկարող է սրբել... Հանգիստ ոսկորներից, հերոս ազջիկ:

ԿՐԵՏԻՆ ԱԶԱՏԻՈՒՄ Է

Այս անգամ եւս Կրետէն ոտի կանգնեցաւ և յաղթական գնացքով առաջ ընթացաւ: Կղզու բաշիբօզուկները գլուխ խոնարհեցրին, տաճիկ զօրքերը ջարդւեցին, խաղաղութիւն հաստատուեց կղզու մէջ: Կրետական հարցը լուծւած էր համարւում, երբ յանկարծ կրետացիք մի նոր անսպասելի հարւած կրեցին: Այդ հարւածը ոչ սուլթանի կողմից էր, ոչ տեղական բաշիբօզուկների և ոչ այլ բարբարոսների, — քրիստոնեաների հովանաւոր, թոյլերի պաշտպան եւրոպական վեց մեծ պետութիւններն են այս անգամ՝ ապստամբ կրետացիներին ռմբակոծում, դահիճներին նեցուկ հանդիսանում: Այս վեց մեծ պետութիւնները, որոնք լուռ հանդիսատես էին մնում՝ սուլթանի դազանութիւններին, որոնք կոտորածների ամենասաստիկ բոլորին մի զինւոր անգամ ափ չիջեցրին՝ անգէն կոտորուողներից դէմ մէկին ազատելու, մի ատրճանակ չարձակեցին արիւնխաւում՝ գազաններին յետ կանգնեցնելու, այսօր Յունաստանի ճանապարհներն են կտրոււմ, կղզու մէջ գտնւած յունական զօրքերը քշոււմ, նաւերը կալանաւորոււմ, — այս դեռ բաւական չէ, — դարերով ճնշւած, այժմ գլուխ բարձրացրած անմեղներին թնդանութներով ռմբակոծում:

Այս լըրութիւնն արդէն չափից դուրս է. դիպլոմատիան պէտք է յետ կանգնի վերջապէս իր խայտառակ ընթացքից. նա չի համարձակիլ կղզուց քշել յոյներին և մասնել նրան սուլթանի բաշիբօզուկների անյագ վրէժխնդրութեան, թէ չէ կը ժայթքի եւրոպական հասարակական կարծիքը իր կատաղի ուժով, կսպառնայ ընդհանուր խառնաշփոթութիւն և կստիպի սուլթանական փթած ռէժիմի շահամուլ պաշտպաններին՝ յարգել

ապստամբ ժողովուրդների արդար իրաւունքները: Եւրոպական հասարակական կարծիքը չափից դուրս է գլրագուած, նրա համբերութեան բաժակը վաղուց է լցւած:

Կրետէն ազատելու է, ինչ փոփոխութիւն ուզում է լինի: Թող կատաղի, փրփրի Վիլհելմ կայսրը, թող սուլթանը ատամները կրճտացնի, թող համերաշխ եւրոպան ռմբակոծի Յունաստանը մինչև իսկ, — սուլթանական ռէժիմը անդարձ կերպով վերանալու է Կրետից:

Դեռ երկու երեք շաբաթ չկայ, — ամեն ինչ խախաղ էր թւում: Խելօք դիպլոմատները բարենորոգումների աւելի խելօք ծրագիրներ էին մշակում, խաղաղութիւն վերականգնած և համերաշխութիւն հաստատած վեց մեծ պետութիւններն իրենք իրենց մեծութեան ու խելքի վրայ էին զարմանում, սուլթանն էլ «հաւաք-եա-վաշ» կրետացիների կրծքին էր նստում, երբ յանկարծ կրետացիք նորից շարժւեցին, և այս խելօքների, հսկաների, աշխարհիս բաղդն իրենց ձեռքն առած զօրաւորների մէջ ներս պրծաւ մի անկոչ հիւր, մի թզուկ, մի «խենթ», որ յանդգնաբար իր ձեռնոցը շարտեց բոլորի երեսին, տակն ու վրայ արաւ ամեն ինչ և ծիծաղելի դարձրեց դրանց հուշակաւոր համերաշխութիւնը: Այդ անկոչ հիւրը, այդ «խենթը» կրետացիներին արիւնակից յոյն ժողովուրդն էր, ժամանակով միասին տանջող, միասին կուռող, միասին արիւնաբամ եղող. այժմ ազատ, բայց բռնակալութեան կսկիծը դեռ իր սրտում կրող յոյն ժողովուրդը:

Երբ առաջին անգամ լսեց կրետացիների նոր շարժման մասին, պարմացան և խղճացին այդ դժբախտներին, որ նորից իրենց անխոհեմաբար ձգում են գազանի բերանը. յոյն ժողովուրդի առաջին բողբոջը անուշադիր անցաւ, յոյն կառավարութեան սպառնալիքը ծիծաղ յարուցեց: Այդ բողբոջը այնքան չնչին էր թւում Օսմանեան կայսրութեան և վեց մեծ պետութիւնների «անքակտելի համերաշխութեան» դիմաց... Բայց անցաւ մի քանի օր, «խենթ» յոյն ժողովուրդը շարժւեց, խելօք դիպլոմատները պատէ պատ ընկան, սուլթանը շըշմեց և քաղաքակիրթ աշխարհը ցնծութեամբ ծափահարեց...

Ճարահատ դիպլոմատներն այսօր ստիպւած են թընդանութներին դիմելու:

Յունաստանը երկար ժամանակ տատանւում էր՝ տանջող եղբայրակիցներին իր օգնութեան ձեռքը համարձակ կերպով կարկառելու: Նա ինքը վստահ չէր իր ուժի վրայ. նա երկիւղ էր կրում Եւրոպական համերաշխութիւնից: Բայց սուլթանի քաղաքականութիւնը նրա համար ամենալաւ ուղեցոյցը դառաւ: Նա տեսաւ ափաշկարայ կատարւած գազանութիւնները, սուլթանի ծաղրական վեկուցումները խառնակութիւնների մասին և համերաշխ եւրոպայի սպառնալիքների ամբողջ ուժը: Նա ինքը փորձեց նոյն շաւղով գնալ: Մի կողմից լսել ձեւացրեց Եւրոպական դիպլոմատների խորիմաստ

խորհուրդները, միւս կողմից ամենապարզ օրը փոթորիկներ հնարելով և այսպիսով եւրոպական ներկայացուցիչների հեռագիրները պահելով, Յունաստանը կարողացաւ անարգել կերպով Արեւել հանել իր ջօրքը, կղզին գրաւել և մէջը նստել: Այս անակնկալ դէպքից շնորհ գիպլոմատներին մնում էր խոնարհել կատարած իրողութեան առջև և Արեւելն սուլթանական լծից ազատ ճանաչել: Բայց դրա փոխանակ գիպլոմատները թնդանօթներ ասպարէզ հանեցին և քաղաքական դրութիւնն աւելի բարդեցին: Կը զիջանի՞ արդեօք Յունաստանը, թէ հերոսաբար առաջ կը տանի իր դիւցազնական մարտը, կը յաջողի խորտակել եւրոպական խեղդիչ համերաշխութիւնը, եւ օսմանեան կայսրութեան ամբողջութեան համար արիւն թափող, յանուն միջազգային խաղաղութեան անընդհատ երդող վեց զօրաւորները չեն յարձակելու շուտով՝ Օսմանեան կայսրութիւնը պատառ-պատառ անելու, այդ կը տեսնենք մօտ ապագայում:

Արեւելն ազատելու է: Իսկ մեր դրութիւնը: 2է՞ որ երկար ժամանակ գիպլոմատները խորհրդաւոր կերպով մի ինչ որ ծրագիր էին մշակում և պատրաստում սուլթանին ներկայացնելու: Ի՞նչ եղաւ նա: Լուութիւն է տիրում՝ այդ հարցի մասին և լուութիւն կը շարունակի տիրել, քանի դու ինքդ լուռ կը մնաս, հայ ժողովուրդ:

Ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ դու անպատրաստ գտնեցար, դու չկարողացար հետեւել բալկանեան ազգերուն, չկարողացար օգտւել և պատերազմի բարիքներին: Բալկանեան ազգերն ազատեցին, քո բռնն աւելի ծանրացաւ: Այսօր Արեւելն ևս ազատում է: Քո գլխին են թափւելու, թշառ ժողովուրդ, կատաղած թշնամու բոլոր հարւածները. սուլթանի հպատակների թիւը պակասում է, քո արիւնն աւելի վայրագնաբար ծծելով՝ նա պէտք է պահպանի իր գոյութիւնը, քո հոգու մէջ է թափւելու իր սե ժահրի ամբողջ պաշարը:

Արեւտական հարցը դեռ չլուծւած՝ կը ծագի մակեդոնական շարժումը: Բօլգարական ժողովուրդը պատրաստում է հետեւել իր յիսնեթմ յոյն հարեանների դրական, նպատակին ուղիղ խփող միջոցներին:

Անթիւ, անհամար զոհեր տալուց յետոյ, այս ճակատագրական լուպէին՝ միայն դու ես յիսեւօք՝ մնալու, հայ ժողովուրդ:

ՆԱՍՏԱԿ ԵՐԱՆԿԱՅԻՑ

1/16 յունւար 97 թ.

Հայաստան սուլթանի յատուկ իրատէով ընդհանուր հայաստանի մէջ գործադրւած այնքան խժգժալի կո-

տորածներէն յետոյ, ի լրումն չարեաց, թիւրք կառավարութիւնը բանտերը հազարաւոր հայերով լեցուց, զորս կամբաստանէր իբր կոտորածներուն հեղինակ, այլ իրապէս անոնց միակ յանցանքը կոտորածէն զերծ մընացած ըլլանին էր և առեւտրական ու արհեստագործական ասպարէզին մէջ գրաւած դիրքերնին: Այս ողորմելի բանտարկեալները, կորսնցնելէ վերջը իրենց սիրելիները, իրենց բովանդակ հարստութիւնը, տունը, ունեցածը չունեցածը, մէկուկէս տարի, քառանց դատի ու դատաստանի, միշին ու ամենակեղտոտ բանտերու մէջ անլուր ու քստմնելի տանջանքերու ենթարկեցան յետին թշառութեան մէջ: Ահա այն անպարտ զոհաւորներու ազատութիւնն էր, զոր սուլթանը՝ իբր կայսերական մեծ շնորհ մը, ընդհանուր ներում անունով, իր հայ հպատակներուն ներսին նետեց, այն թշառ ազգին, զոր փաղիշահը իր գազանային հրամանով մոխրի ու աւերակներու վրայ նստեցուց, մերկ ու անօթի:

Այո, սուլթանը կուգէ իբր կայսերական շնորհ կը լեցնել աշխարհի, իր վայրագ բարբարոսութեանց փոխվաթք քանի մը բանտարկեալներ ազատելով: Շատ մը քաղաքական բանտարկեալներ, հակառակ իրատէի բացորոշ տրամադրութեան, կառավարիչներու անարգ շահախնդրութիւնը և ոխերիմ՝ ոգին, զնտաններու մէջ կը պահէ բազմաթիւ նշանաւոր հայեր և ուրիշներ, որոնք քաղաքական յանցաւորի ոչ հոտ ունին և ոչ գոյն: Կը պահեն քաղաքիս բանտարկեալներէն 19-ի չափ ազգայիներ, Արեւմտեան և իր ընկերք, որոնց մըթին խորշերուն մէջ կայսերական ակամայ շնորհը չհամարձակիր ներս թափանցել, թէ և ասոնք ալ ճանչցւած էին իբր քաղաքական յանցաւորներ՝ թէ իրենց դատաւարական թղթերով և թէ կայսերական այն մասնակի ներման դէպքով, որ տեղի ունեցաւ 1895-ի ամրան սկիզբը, և որ այդ առթիւ ազատեցան անոնց մեղսակից 25-50 ընկերները: Իսկ եթէ իբր մահաւոր դատապարտեալներ նկատեցան՝ նորէն անիրաւ է, զի թէ և նախնական դատարանէ մը այդպիսի վճիռ մը տրեցաւ, սակայն վճռաբեկ ատեանը ջնջեց նախկին վճիռը: Իզո՞ւր բանտարկեալները այս իրողութեան վրայ հիմնելով, կրկին ու կրկին հեռագրով բողոքներ մատուցին կեդրոնական բարձրագոյն իշխանութեանց, օրեր, շաբաթներ անցան և դեռ ո և է նպաստաւոր արդիւնք դուրս չեկաւ, պարզ է՝ թէ ասոնք զոհ կերթան կառավարական պաշտօնեաներու թշնամական վարմունքին, որոնք ո՞վ գիտէ ինչպիսի խեղաթիւրում տւեր են անոնց գործին: Ասոր տարակոյսի տեղի չկայ:

Թւականէս երկու օր առաջ տեղիս քիւրտ բանտարկեալները մասնաւոր պատրաստութեամբ բիրերով ու դաշոյններով զինւած՝ կը յարձակին 15 հայ բանտարկեալներէն մէկուն, ակնեցի ճանիկ ժամկոչեանի վրայ և յանկարծակի բերելով՝ այնպիսի հարւածներ կուտան, որ խեղճը կեցած տեղը զգայազիրկ գետին կը տապալի: Հէք երիտասարդք քանի մը օր ահաւել տագնապներու մէջ՝ աւանդեց իր հոգին, առանց կրօնական վերջին միթարութիւն ընդունելու. կառավարական պաշտօնեաները թալլ չուին խնդրարկու քահանային, որ յատկապէս գացած էր դժբախտ հոգեւարքին քով: Այս տղերքը կը գրեմ, պատւական երիտասարդի թաղումին տիւրը հանդէսէն վերագարծիս, աչքերնիս արտասուքով և սրտերնիս հեծեծանքով լեցւած:

Մեծ-ճանիկ—այսպէս կը կոչէր զանազանելու համար Փոքր-ճանիկէն, որ նոյնպէս ակնցի էր, նշանաւոր իր քաջութեամբ—քաջ էր բառին լայն նշանակութեամբ, որուն կենսագրութիւնը արժանի է հերոսական էջերու մէջ քայլելու: Իր ետեւէ կը թողու սգալի այրի մը և խեղճ դաւակներ:

Դաւագրութիւնը, որուն զոհ գնաց ողբացեալը, կըսուի թէ նշանաւոր հերոս Հաճի-Գալուստ Արխանեանի դէմ էր, սակայն պարագաները կը փրկեն զինքը այդ սոսկալի դաւաճանութեան հետեանքէն: Վարող էր երեւակայեւ հայ բանտարկեալին վատ գրութիւնը, որուն այսօր ենթարկւած կը մնայ սարսափահար: Բանտային այս տխուր իրողութիւնը տեղիս համար նորութիւն մը չէ, հինին շարունակութիւնն է արդէն: Ճիշտ անցեալ տարի այս ատեններս դարձեալ նոյն խժդփական փորձերուն ենթարկւած էին հայ բանտարկեալք, փորձեր, որոնք շարաթներ տեւցին և շատեր մահամերձ վիճակի մէջ անկողին ինկան, որոնց մին նշան Պաղտասարեան ազնիւ և բարեհամբոյր երիտասարդը եղբրական մահով փակեց իր աչերը, իր ետեւէն թողուով անմխիթար ընտանիք մը:

Հայ բանտարկեալներուն սրտաճմլիկ կացութեան վերայ այսքան հակիրճ տեղեկութիւն մը տալէ յետոյ, երկու տող ալ ազատւած հայ բանտարկեալներու մասին կուզեմ գրել և ցոյց տալ այն անմխիթար վիճակը, որու մէջ ստիպւած են ապրել անոնք, իբր կենդանի մեռելներ:

Իսլամ մոլեռանդ խուժանը ամբողջ հայութեան դէմ այնպիսի խորարմատ ատելութեամբ լեցած է, որուն նմանը պատմութեան մէջ տեսնւած չէ: Երբ բովանդակ հայ ազգը իր ապագայի անստգութենէն յուսահատ, նորանոր աղետալի պատահականութեանց երկրազոյժ համակւած, ահուգողի մէջ կապրի, միթէ ազատող հայ բանտարկեալը կարող է հանգիստ կեանք ունենալ, քանի որ ինք ամենէն աւելի նշաւակ դարձած է թիւրքին վրէժխնդրութեան, և իրեն դէմ սպառնալիքներ կարձակին արինարբու, կոյր և անբան խաժամուժի մը կողմէ: Վերջերս այդ բերանացի սպառնալիքը գործքով ցոյց տալու համար՝ խնձորկցի Անտօն անուն երիտասարդ մը ուղեցին սպաննել խեղճ երիտասարդը հազիւ պրծաւ վեցհարւածեանի գնդակներէն: Հայ բանտարկեալը, որ քայքայւած ընտանիքի մը գիրկը վերագարձաւ, իր տուն ու տեղը քանդուած, միթէ կարող պիտի ըլլայ ներկայ վատթար պայմաններուն մէջ զայն վերաշինելու յանդուգն ձեռնարկն ունենալ կրկին, կարող պիտի ըլլայ՝ դարձեալ հրապարակ ելլել իր արհեստին ու գործին սկսելու, երբ անիկա թիւրքին աչքին ս ա պ ը գ ա լ ը մ'է արդէն. թողունք թիւրքը, հայը պիտի համարձակի՝ իր արինակցին հետ անվախ կերպով յարաբերութիւն ունենալ: Եւ ինչպէս թիւրք պաշտօնեան կը յայտարարէ, եթէ անիկա այսօր բանտին մէկ դռնէն դուրս ելաւ, վաղը միթէ կառավարութիւնը իբր յաւիտենական կասկածելի, միւս դռնէն ներս չպիտի նետէ զայն: Եւ կարծէ՞ ունենալ այսպիսի ազատութիւն, այսօրինակ կեանք . . .

Հուրէ ու սուրէ անցած և ունեցածէն ու չունեցածէն կողոպտւած հայը՝ դեռ հանգիստ չեն թողուր, որ գոնէ լուիկ մնջիկ ողբայ իր դառն ու անգարմանելի կորուստը: Մեր վիճակը կարելի չէ բազդագել ընկերա-

յին կամ անհատական ու է դժբախտութեան հետ: Անսիրտ հարկահաններ, տուրքերու գանձման համար, չեղած լրբութիւնները ու անօրէնութիւնները կը գործեն, եթէ հայ կիներուն քով մնացած է ցնցոտի մը, եթէ հայ արհեստաւորին քով՝ գործիք մը, երկրագործին քով՝ եղ մը, նախատանքներով ու ծեծով, փետով կը խլեն: Թիւրք ապական պաշտօնեաները, ոտքէն գլուխին, ամեն տեսակ մոլութիւններով վարակւած են, և իրարու հետ կը մրցին տառապեալ հայ ժողովրդին արիւնը ծծելու համար:

Այս Համիտի բարենորոգումները, որոնք հայուն համար միշտ ցնորք պիտի մնան: Այդ բարենորոգումները սոսկալի ճախճախուտին վրայ պլպլացող շրջովիկ հուրերն են, որուն զոհ կերթայ միամիտ ուղեւորը:

Կ Ա Ր Ի Ն

18/30 դեկտեմբեր 96 թ.

Անցեալ անգամ հաղորդեցինք Բասէնում մեր հայդուկների և սահմանապահ զօրքերի ու քրդերի մէջ տեղի ունեցած կռիւ մասին: Զախջախւած թշնամիները սյս անգամ էլ իրենց վրէժի թոյնը թափեցին հայ ազգաբնակչութեան վրայ, ուրիշ կերպ չկարողանալով հանգստանալ իրենց տւած զոհերի համար:

Կատաղած կառավարութիւնը իսկոյն բաւականաչափ զօրք ու բօլիսներ է ուղարկում Բասէն. բօլիսների մէջն էր գտնւում նաև հայ գամիսէր Տիգրանը, որի չարութիւնը չմնաց, մանաւանդ այս անգամ: Սաստիկ ծեծի ու տանջանքների տակ բօլիսներին յաջողեց երեւան հանել բաւականաչափ հրացան՝ իրենց բոլոր պարագաներով, տեղափոխւած այնտեղ ահագին զոհաբերութեամբ: Չերբակալւածների թիւը ճիշտ 50 է: Սոքա բոլորն էլ քաղաք են բերւած և այժմ հարցաքննութեան տակ են գտնւում:

Քաղաքում ձերբակալեցան 14 հոգի երիզացիներ, գործից բոլորովին անտեղեկ մարդիկ: Ոստիկանութիւնը սաստիկ ծեծի տակ յաջողեցաւ դրանց ևս խոստովանութիւններ ընդունել և ստորագրել տալ:

Յայտնի եղաւ, որ Երիզայում էլ այս առթիւ ձերբակալւած են 6-8 հոգի:

Կարին էլ դեռ սրանից շատ առաջ ձերբակալւած են մօտ 30 հոգի, որոնցից 15-ը մնում են դեռ անվճիռ:

Կարնոյ բանտում բոլոր քաղաքական յանցաւորների թիւը հասնում է 250-ի:

Թ Ի Ի Բ Գ Ի Ո Յ Ծ Ո Ւ Ր Զ Ը

Չմիտն օրերուն հետ կերելի Թիւրքիան ալ պիտի հալի: Երեւոյթները շատ բարենշան չեն, քսցց նպատակայարմար են: Այն անդունդը, որու մէջ ցուտ դաւալիները գլորեցին Թիւրքիան, շատ շատ խորունկ է. այդ պարագայութեան մէջ անկումը կը շարունակուի՝ զանազէժ արագութիւնով, դեռ տակը չէ գտած, երբ մէյ մը հոն հասնի՝ «անդ եղիցի լաւ ու կրծտել ատամանց»: «Յուսագար մարդուկը» թող շուտով վերնայ մէջտեղէն. ալ հերք

է. այդ աննպատակ գոյութիւնը զգուշի է՝ թէ իրեն եւ թէ ընկերութեան:

Գարունը կուգայ. երանի՜ թէ քնութեան գարնութեան հետ, մարդկութեան դէմքին վրայ ալ երանութեան ժպիտներ փթթէին: Երանի՜ կըսենք, որովհետեւ աշխարհիս քաները միշտ հակառակն են երանական գաղտնիարին հակառակ ուղղութիւն ընել. որքան ալ երեւոյթները յուսաժպիտ թւին, բայց միշտ ստուեր մը կայ, որ այդ մշտագիտփոխ երեւոյթին վրայ կը տարուբերի: Մենք՝ հայերս մինչեւ այսօր մեր ուժէն խիստ աւելի գործեր կատարեցինք, առանց Յոյն կամ Պոլկասը կատարութեան մը ձեռնադրութեան. մենք այսօր աւելի գործող ու աւելի անարկու ենք մեր ոյսերով՝ թշնամիին: Պաղարունութիւն, պէտք է հրապարակենք կամ շարունակ միջազգային ամուլ ցոյցերէն. մեր ազգային աննւաճ նկարագիրը քարծր պահենք, եւ անհաշտ վրէժխնդրութեան մը ոգին թող հրահրէ մեզ: Գիտե՛մ, հայ ժողովուրդ, ո՛րք է քո ազատութիւն, «ի ծայրին քո սրիդ»:

Թիւրքիան շատ կը խաբւի, երբ հայաժամանկերով մեզ ջլատելու միամիտ հաւատքը կը մտնան: Ժամանակը դեռ շատ անապահաւոր վերապահած է, հայութեան ուրախանքները չափի թոյլ տան, որ Թիւրքիան հանգիստ քնանայ ու կերածը անուշիկ մը մարսէ: Հայութեան փառքը ոճրագործ պետութիւն մը աշխարհի երեսէն քնաշինք ընելը պիտի ըլլայ ե՛ւ... պիտի յաջողի առանց այլեւայլի:

* *

Հայկական հարցը հիմնականում Պոլսոյ դեսպանատուններուն մէջ կը թափանկի, տեղի տալով ուրիշ սպանական հարցերու: Դեսպանները իրենց մշակած ծրագիրը սուլթանին ներկայացնելու համար, Բամազանի եւքին կապանեն, զի խղճահարութիւն կզգան խալիֆայի սրբինի ու երկիւղած խոկումները պիտորել: Պէտք է յարգել երեսնորեայ ծուլութեան իրաւունքը, պէտք է որ համարը քիչ մը խաղաղիկ մարսէ իր խմած արիւնը, եւ հազար ու մէկ զիններեքու զեղխութեանց ու շուայտութեանց մէջ պահիկ մը մոռնայ իր սրտին խայթը... Սուլթանի անգին քարեկամ Գերմանիոյ կայսեր փափաքն ալ այս է: Վերջէն վայրբան հոգածու է գուցէ իրեն համար, որքան իր հազազիւտ պաշտօնակցին թանկագին կեանքին համար: Զէ՛ որ կեանքին նպատակը զազանային ու զրատական քնազններու գոհացումն է, գոնէ... վեհապետներուն համար:

Տէրութեանց անբաժան համաձայնութեան առթիւ Փրանսական պատահախնդիր թիւրքերէն մէկը՝ «Թան» հիւսնալով դեսպաններուն վճռական գործունէութեան վրայ, կըսէ՝ «վերջապէս Եւրոպական ներդաշնակութեան համաձայնագի ծայրը կը լսի... եւ եթէ Թիւրքիան յամառի դեռ իր «ոչ կարեմ»-ին վրայ եւ մ'ա ր դ կ ա յ ի ն ա գ գ ի հանրային խղճին քաւարարութիւն չի տայ, մեծ ճգնապահի մը նշանը պիտի ըլլայ...»: Բայց քաղաքական թիւրքը, անգիտակցաբար թիւրքեւ, լատտեանութեամբ կսկի իր առաջնորդողները ու սկեպտիկութեամբ կը վերջացնէ:

Այո՛, Եւրոպական համաձայնութիւն կայ, քան մը շնչելու եւ դժբաղդ ժողովուրդները շարժելու համար միայն: Եւրոպական համաձայնագի հաշտը կը լսի ան հրեանէի շուրերուն մէջ...

Եւրոպական կեդնուկատիր համաձայնութիւնը, որուն վրայ տէրութիւնները իրենք ալ կը ծիծաղին, կրնայ ծմարտաշափ մ'ըլլալ անոնց քարոյական արժէքին: Զէ՛ որ նեխտօքը բերնէն փախցուց սա կոպիտ, բայց շատ ծմարտա խօսքը՝ «կը համաձայնենք համաձայնած ըլլալու համար միայն»:

Թիւրքիոյ ամբողջութիւնը-կամ աւելի ծիշտը անկէք միծաղոյն պատառը խլելու սրտատանջութիւնը-աւելի կզբաղենք դիւանագէտներու միտքը, քան հուրի ու սուրի մատնած ժողովուրդին ծիշ ու սողաղակը: Կըսեն թէ Թիւրքիայէն ծանծ մը չի պիտի իւրացի: Եթէ քնական պատժաւորներով, Թիւրքական կղզիներէն մէկը ծովուն մէջ ընկնի, Ռուսիա կը խոստանայ, այդ կղզիին տարածութեամբ հող տալ, իսկ երբ Արշիպիղագոսի Թիւրքական շուրերուն մէջէն, եթէ ղըլինները կամ ծուկերու վտառ մը անցնի օտար շուրերու մէջ, իսկոյն, Եւրոպական քարեխիղճ տէրութեանց նաւերը կը վազեն ու ետ կը մղեն կամ կորսան ու սուլթանին կը դրկեն՝ Թիւրքիոյ ամբողջութեանը պահպանման սրագրան իրաւունքը գործադրած ըլլալու համար: Թիւրքիոյ թռչուններն ալ իրաւունք չունին քնակութիւն հաստատել վեց մեծ տէրութեանց երկիրներուն մէջ. զի քնակարում մ'է՛ «ամբողջութեան դաշնագրին եւայն»:

Այն statu quo-ն, որով դիւանագիտութիւնը պսակեց Թիւրքիոյ ծակառը, մեծազոյն պատմի՛ն է, որ մէկու մը շնորհած ըլլայ: Այդ խօսքը կարելի է հասկնալ նա եւ սա պէս՝ «կեցած տեղը փոփոխ»։ Եւ փոփոխու ալ մեծազոյն կայսրութիւնը, որ պատմութեան մէջ կը թողու լաւ «հարակէօզ» խաղցնողի մեծ անունը:

Սուլթանը՝ շամշարով, շնորհակալութիւն կը յայտնէ դեսպաններուն, որ իրենց ծրագրին մէջ միւսիւրկաններու շահերն ալ նկատի առնելը են: Կարծես իր պաշտօնը միայն հարեմներ արծել ըլլար:

Ամեն օր, թիւրքեւ ամեն ժամ, Թիւրքիոյ մէջ նոր-նոր ծրագիրներ կը յղացին, եւ յամաժողովներ կը կազմուին: Սուլթանը «էվրիքա»

կըսէ եւ յամաժողովներ մը կը կազմէ, որուն պաշտօն կուտայ ակնութարթի մը մէջ կերպարանափոխել երկիրը: Սուլթանի այդ խաղերը պարզապէս «հէքքէս ալքլէրիշտէ կէօրսին» է:

Ամեն անգամ, երբ համարը կը տեսնէ, որ պետութեանց մէջ համաձայնութեան երկիւղը կայ, իսկոյն լուր կը հանէ՝ թէ ինք արդէն քարենդրոգումները գործադրել առած է եւ վեց նահանգներուն մէջ սկսած են քարեյաջող պտուղներ տալ: Նասրէտօփն հօժան իսկ այդքան խորունկ չէր կրնար մտածել:

Բամազանի 15-ը մօտենալուն, Մեծ-Մարդասպանը պէտք է Պոլիս անցնի Մուհամմաթի քրջուտ խրգան համբուրելու համար: Բռնակաշները, կըսէ Պոլսոյն, մարդկութեան ամենէն անարգ ու ամենէն դժբաղդ արարածներն են: Հոս երեսն եկաւ այդ ծմարտութիւնը: Որչափ ատեն, արիւնարբու խալիֆան, 20000 զինուորով շրջապատուած էր, երկրին ամեն շարիք կը հասցնէր. բայց երբ հարկ եղաւ հասարակութեան մէջ ելլել, երբ զգաց թէ հանրային խիղճը ռումբեր ունի վատերուն համար, սոսկաց. եւ վայրկեան մը գիտակցութիւնն ունեցաւ իր հրէշութեան, որուն ետեւէն կը քալէ արդարութեան անողորմ վրէժխնդրութիւնը: Ուստի հրաման ըրած է, որ անխտիր ձերբակալեն ամեն կասկածելի հայ կամ թիւրք, եւ քանի մը օրուան մէջ քանտներ ասպնջականութիւն տւին երկրին ծաղիկ երկրասարդութեան: Պիկ Եւրոպա ալ մարդ դրկեց համագլու համար «Երիտասարդ Թիւրքերը», որ ետ կենան յեղափոխական ծգտումներէ. վերադառնան Պոլիս, ուր «սոստագութ» սուլթանը պիտի շնորհէ անոնց մեծ-մեծ պաշտօններ, ամսականներ եւ թիւրքեւ մէյմէի գեղանի «չէրքէգուհի» ալ: Կը խոստանայ նաեւ պայրամէն յետոյ անոնց սահմանադրական պահանջները գոհացնել:

Այս ամեն իրարանցումը Բամազան 15-ը անցնել էր, որով սուլթանը կուզէր թմբեցնել հանրային զրգուած միտքը, իր թունալից կեանքը առժամայէս փրկելու համար: Մենք տարակոյս չունինք թէ Թիւրքիոյ մէջ շարունակ խոստումները մեծ դեր կը խաղան: Բամազանի 15 օրերուն մղկիթներուն մէջ, սպանապք եր փակցելը են, սուլթանի մահը պահանջելով. բայց ինչպէս կերելի խալիֆան այս տարի ծովով կատարեք է իր խրգայի շէրիֆի ուխտագնացութիւնը. գալ տարի ալ օղապարկով պիտի ընէ կըսեն: Համարը օր մը իր փաշաներէն մէկուն խօսակցութեան մը մէջ ըսեր է՝ «եթէ իմ ժողովուրդս (առհասարակ) զիս չսիրէ, զինքը փութ չըրած՝ զարհէս վար չեմ՝ իշներ»։ Տաճիկները իրենք կը պատմեն:

Պոլսոյ մէջ իրաց վիճակը վտանգաւոր կերպարան կառնէ: Կրեւտէի անդ ապստամբութիւնը մայրաքաղաքին կացութիւնը աւելի կը ծանրացնէ. թիւրքերը փողոցներուն մէջ սպանական թղթեր կը ցանցեն եւ «Երիտասարդ Թիւրքիան», կը յայտարարէ դեսպաններուն թէ ներկայ խայտառակ վարչութեան վերջ տալու համար հայոց միջոցներուն պիտի դիմեն: Փողոցները պահանջներով լցւած են՝ նախագլուխութեան համար: Ընդհանուր խռովութենէ սաստիկ կը վախցի: Նեխտօք պաշտաւ վազեր ու պահանջներ է, որ միջոցներ ձեռք առնին:

Նաեւ սպանացիներ են Պոլսոյ յոյները շարժել, եթէ Յունաստանը Կրեւտէի խնդրին համար պատճառ ըլլայ պատերազմի: Յոյները, որ երբեմն կը խնդային հայերուն վրայ, երանի՜ թէ ըմբռնէին թրքական վարչութեան վայրենութիւնը... Բայց յունաց համար վախնալու քան չկայ. չէ՛ որ սուլթանը երկու տարի առաջ, հայերուն իր առեւտրութեան ապացոյց մը տալու համար, յոյն ժողովուրդին նկատմամբ իր քարծր համակրութիւնը յայտնեց եւ իսկոյն հրամայեց, որ հայերը միջոցներ պետական վարժարաններէն, եւ ամեն տարի ալ 40 յոյն աշակերտներ ընդունելու կայսերական ծախքով: Անշուշտ այդ «միջոցներ»-ները կը քարեխօսեն իրենց ազգին համար: Մանաւանդ սուլթանը գիտէ՝ թէ յոյներուն ետեւ արջ մը կայ, հայերուն պէս անտէր չեն:

Նոր թղթեր փակցւած են պատերը, յորդորելով քրիստոնեաները, որ չի վախնաւ: Կը կարծի՜ թէ կատարութեան կողմէ է այդ հնարքը, քնացնելու համար զանոնք:

Մակեդոնիան անգին պատրաստութիւններ կը տեսնէ, եւ կըսաւսէ ծիծեմնակի աւետաբեր զայտնան:

Փրանսական ժողովուրդին մէջ սուպետական զգացումներու յորդում մը սկսած է, որ կարելի է ըսել հակառուսական առաջին թրթռումներ են: Անոնք, որոնք մարդկային գաղափարին մէջ շատ առաջ անցած են, կընդվզին Փրանսիո-Ռուսական դաշնակցութեան դէմ: Մենք, կը գրէ Բոզֆոր, մեր միլիարդները տւինք, մեր ձեռքը երկնցուցինք ու Ցարին այնքան հանդիսաւոր ընդունելութիւն ըրինք, չէ թէ դժբաղդ ժողովուրդները հաւածելու, զանոնք խոլիտող տալու եւ մարդասպանները հովանաւորելու, այլ մարդկութեան դատուն ծառայելու համար: Ուրիշ շատ ազատական թերթեր էլ իրեն են համանման զգացումներով: Փրանսական աւանդական քաղաքականութեան, քաղաքակրթիչ դերին հակառակ կը գտնեն դեռ ազգերու թշտադրութենէն հաճող զգացող ու հաւածող բռնակալի մը դաշնակցութիւնը:

Այժմ Կրեւտէի հարցն է, որ կզբաղենք դիւանագիտութիւնը ու հանրային կարծիքը, որուն հետ գուզնութեան կընթանայ միշտ հայկականն ալ: Թիւրքիոյ մէջ յեղափոխութիւնները պարբերական հո-

վեր են. բոլոր տանջող ու դէպի ազատութիւն սլացող ազգութիւնները շղթայաբար կապուած են իրարու: Երէկ հայը, այսօր կրեւտացին, վաղը Մակեդոնիան կամ՝ Սերբիան, ետեւէն նորէն նայը կը հասնի որոշեալ ժամուն եւ որոշեալ ծրագրով:

Մեր ազօրիքը կամաց կաղայ, սայց փոշի կը դարձնէ:

Կ Ր Ե Տ Է

Այդ սիրուն կողին երեք մեծ ցամաքներէն գրեթէ հասարակէս հեռու, Միջերկրականի սրտին վրայ կը հանգնէ: Արշիպելագոսի հարաւային բերանը հսկայ կէտ ձորի մը պէս երկնցած, մէկ ծայրէն մանտրտիկ կը դգեակներու պծով մը կը կցւի Հոգոսի, միւսով Յունաստանի հարաւային հրանդանին: Կրեւտէն դէպի հիւսիս, եգեան ծովուն մէջ կը զգնեն համաստեղութիւն մը կը տարածուի, յմանիշակ՝ ալեակներու գրկին մէջ հանգչած:

Կրեւտէ աշխարհագրական և ուսումական սքանչելի դիրք ունի: Երբեմն քրիստոնէութեան ամրոցը կը սեպուէր:

1645-ին թիւրքերը, որոնց մէջ աշխարհակալութեան գրգիռը, և կեաւորները հպատակեցնելու մոլեռանդութիւնը իր գագաթնակէտին հասած էր, վճռեցին Կրեւտէին տիրել: Քառորդ դար անընդհատ կռուեցան, վենետիկցիք հրաշալի քաջութեամբ դէմ դրին եէնիշէրներու վոհմակին, որոնց թիւը «ծովու աւազներէն» շատ էր:

Քրանսացիք օգնութիւն ղրկած էին կրեւտացիներուն: Այն ատենի վեզիրը Քէօփրիւլի Ահմէտ փաշան զարմաքով կըսէր Լուի ԺԴ-ի դեսպանին՝ «Քրանսացիք մեր բարեկամներն են, բայց ամեն տեղ մեր թշնամիներուն հետ կը տեսնենք»: Այսօր Համիտը իրաւամբ կրնայ պարծենալ Քրանսայի անկեղծ բարեկամութեամբ:

Վենետիկի տիրապետութեան օրով կողին 700000 բնակիչ ունէր, մինչև 1844 թիւը 160000-ի իջաւ, և այսօր 300000 ունի:

Խորիւտ կրեւտացին իր դժխեմ ճակատագրին տակ, սրբազան յիշատակի մը պէս իր զաւակներուն կը կտակէր, ոչ թէ հարուստ ժառանգութիւն, մշակած դաշտեր, այլ անշէջ վրէժխնդրութեան մը ոգին, այդ գազան մոնկոլներուն դէմ, որոնց օրէնքն էր կոպիտ բռնութիւնը միայն:

Այս դարուն սկիզբէն ի վեր Կրեւտէ՝ ամեն անգամ որ առիթը ներկայացած է, ապստամբած է: Յունական անկախութեան սկզբները՝ 1821-ին Մայր-հայրենիքէն աւելի արիւն թափեց, զարկաւ տաճկաց զօրքերը, մինչև որ եգիպտական արիւնկզակ բանակը եկաւ և այդ ապստամբութիւնը խելոքեց արեան սոսկալի հեղեղներու մէջ: Յունաստանը ազատեցաւ, բայց Եւրոպան վրձուեց, որ Կրեւտէն սուլթանի լծին տակ մնայ:

1858-ին նոր ապստամբութիւն մը, իսկ 1866-ին աւելի լայն ապստամբութիւն մը, որ տեւեց երկուսուկէս տարի: Կրեւտացիք յաջողեցան Հալեքայի դաշնագրով բարենորոգումներու խեղճ ծրագիր մը խել, որ նախապէս կիսով գործագրուեցաւ, քիչ յետոյ ան ալ բռնաբարուեցաւ:

Բայց անխոնջ կրեւտացին օր մը չը մտաբերեց գէնքը վար դնել: Ճակատագրական կռիւն էր, որ կը մըղէր: 1878 և 90-ին կրկին բռնկեցաւ Կրեւտէ. իսկ 1896-ին պայթեցաւ այս մեծ ապստամբութիւնը, որ հարկ եղաւ Եւրոպական ակամայ միջամտութեան մը: Սուլթանը ստիպուեցաւ ճնշման տակ կեաւորներուն կամքը կատարել:

Վեց ամիս է Դուռը բարենորոգումներու յոյսերով կրեւտացիները կը խաղցնէր. միւս կողմէ կը մուտէր միւսիւման մոլեռանդութիւնը, որպէսզի հակառակի բարենորոգութեանց ծրագրին և վախցնէ քրիստոնեաներու աչքը: Սակայն կրեւտացին միշտ արթուն և խստապահանջ կը մնար: Քանի մը շաբաթ առաջ թիւրքերուն անիրաւի քանի մը քրիստոնեաներ սպաննելուն վրայ, կրեւտացիք ծայրայեղօրէն գրգուռած ընդհանուր և վճռական յեղափոխութեան դրօշը պարզեցին: Մայր-հայրենիքը այս անգամ խուլ չի մնաց իր ազատասէր զաւակներու հրաւերին. ամբողջ Յունաստան հայրենասիրութեան հնոց մը դարձաւ և օգնութեան վազեց իր եղբայրներու հրացանի պայթիւնին: Եորկիոս թագաւորը հայրենասիրական այդ պոռթկացումին առջև տորմիլ մը ղրկեց Կրեւտէի առջև, թիւրք պաշտպաններուն ցամաք ելելը արգելելու համար: Յունական թորփիլներու ներկայութիւնը Կրեւտէի առջև, կրեւտացիներուն խանդը բորբոքեց: Յոյն կամաւորներ ամեն կողմէ գտնուեցան և հրացանը ուսը զարկած վազեցին Իգալի ստորոտը իրենց եղբայրներուն հետ կուշտկշտի կըուելու համար:

Յունաստանը՝ աչքը արիւնը առած, այլևս անկարկիր հանդիսատես մը ըլլալ չուզեր իր եղբայրներու խողկողման:

Յունական այս անվեհեր շարժումը և 2000 յոյն զինուորներու Կրեւտէ ժամանումը, սարսափ ազդեց թրքական կառավարութեան վրայ: Կրեւտէն հռչակեցաւ Յունաստանին միացած և յունական դրօշը սկսաւ թռչիլ Կրեւտէի սարերուն վրայ, հոն՝ ուր ազատասէր կրեւտացին դարերէ ի վեր իր արիւնը կը թափէր:

Սուլթանը կեղծ սպառնալիքներ ընել առաւ ոչ միայն Յունաստանին, այլև Եւրոպական խաղաղութեան:

Բայց աւաճ, Եւրոպի սպառնալիքը տեղէն չի շարժիր: Իր փտտած նաւերը, որոնց տակ մէկ մէթը ոստրէ կապած է, կը դժկամակին բացուի մեծ ծովերու վրայ. իսկ Օսմանեան քաջարի բանակը կսպասէ սուլթանի հրամանին կիներ ու արդար մանուկեր ջարդելու համար: Պալատին մէջ մէկ կուսակցութիւնը պատերազմ կուզէ հրատարակել, յուսալով, որ փոքրիկ Յունաստանին յաղթելով կը վերահաստատեն իրենց հին զինուորական փառքը:

Թրքական հեղգութեան և գազանութեան հանդէպ հեղին հայրենասիրութիւնը օրէ օր ծաւալ կը գտնէ և հիացում կազդէ աշխարհի: Մեծահարուստ յոյն մը իր բոլոր հարստութիւնը, որ միլիոններ կը հաշվէի, Կրեւտէի ազատութեան գործին կը նւիրէ: Օտէսսայի յոյն գաղթականութիւնը 200000 բուլղի ղրկած է: Ռուս են մեր ջհուտ հարուստները:

Կրեւտէի հարցը և յոյն ժողովրդին այդ խիզախ քայլը, որ արհամարհելով ոճրագործ տէրութիւններու ագրարարութիւնները, օգնութեան թուաւ իր թշուա եղբայրներուն, Եւրոպայի մէջ համակրութեան զօրեղ ար-

պայայտութիւն մը առաջ բերած է: Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ հանրային կարծիքը Կրետէի աղատութիւնը կը պահանջէ: Մեծ քաղաքներումէջ կրակոտ ուսանողութիւնը խանգավառ ցոյցեր կընէ: Յունաստանի ի նպաստ: Երբ տէրութիւնները իրենց յօնքերը կը պոռտեն Յունաստանի դէմ, այս երիտասարդ ձայները՝ աղատութեան երգեր կը դողացնեն և կարծես ապագայի արշալոյսի գայլայլեկն է, որ կը լսուի:

Տէրութիւնները կզգուշացնեն Յունաստանին. իսկ Գերմանիոյ ձախլիկ կայսրը, զոր Ռոշֆոր իրաւամբ կանանէ վայրագ և ներսն, կը պահանջէ, որ Յունաստանը պաշարեն և ուժակոծեն, և Պերլինի օբերային մէջ Մեծ-Ուճրագործին գեսպանին հետ թեթեւի մտած կը հաւատէ անոր, թէ ինք սուլթանին համար բարձր հոգածութիւն ունի: Անգլիա բացէ ի բաց մերժեր է Գերմանիոյ քէօր ու թօփալ կայսեր հակամարդկային առաջարկը և կըսուի թէ կծու ծանուցագրեր փոխանակած են այս առթիւ: Միայն Ֆրանսայի կառավարութիւնն է, բայց ոչ ազգը, որ կը հաւանի պաշկպօզուք վիճելմին: Մարդկային իրաւանց յայտարարութիւնը՝ ափսոս, մարդկային իրաւանց բռնաբարութիւնն է այլևս Ֆրանսայի համար:

Յոյները տէրութեանց ու և է պատրուակի տեղի չի տւած, անակնկալ կերպով տեղաւորեցան Կրետէի մէջ և մինչև իսկ վարչական կազմակերպութեան ձեռնարկած են: Տէրութեանց անհամաձայնութիւնը ամբողջական դատապարտւած է: Այդ անհամաձայնութիւնը մինչև հիմա կանգուն պահած էր Թիւրքիան, այդ անհամաձայնութիւնը, ինչպէս կերևի, պիտի քակէ Թիւրքիան: Ամեն չարիք իր բարի կողմը ունի:

Քաղաքակիրթ աշխարհի հանրային կարծիքին առջև չիլ դիմանադիտութիւնը շարեր է: Թիւրքիոյ ամբողջութեան հարցը կզգան թէ ցնորք է. քանի որ ան ինքնիրեն կը քայքայուի: Կրետէէն դուրս կը նշմարեն այն հրաբխային խառնարանը, որ կը տարածուի Պալքաններէն Մասիս. հասկցած են թէ մարդկային իրաւունքի բռնաբարութիւնը ուշ կամ վաղ կրակ պիտի ձգէ, եւրոպական պատիւր ու սպառնալէն խաղաղութեան չորս անկիւնները: Եւ սակայն սուլթանը առիթէն օգուտ կը քաղէ պահ մը՝ վիճելներու և Յարերու հովանաւորութեան շնորհիւ, որքան ատեն ողջ է՝ կարող է աւերակներ ու դիակներ կտակել աշխարհի:

Կրետէն նորէն թրքին լուծին տակ խօթել, չը պիտի նմանէր մարդակեր վայրենիներու ձեռքէն հեհնէ պըրծած թշուառ մը բռնել և տանիլ նորէն մարդակերներու ժանիքին յանձնել:

Քիչ մը գթութիւն, ով անսիրտ մարդկութիւն:

Մարդկային ամեն ստորնութեանց դիմաց, վսեմ գիւցազնութիւններ կան սակայն:

Կեցցէ՛ Կրետէն:

Կեցցէ՛ Յունաստանը:

Ա Ս Օ Ր Ի Ն Ե Ր

Վանի առաջին մեծ կռէն վերջ, երբ երկրի յեղափոխական ուժերը ամենատարգի կերպով կոտորու-

ցան պարսկական սահմանագլխի մօտ, ասպարէզը մնաց քիւրդերուն, որոնք աջ ու ձախ կը շրջէին, կոտորելով ու թալանելով անպաշտպան մնացած երկիրը: Քիւրդերու անորոշակը շատ էր բացւած. հայերը թալանելէն վերջ քիւրդերը կը յարձակին ասորաբնակ Դիար-Ախուրի քանի մը գիւղերու վրայ և թալանի կը տան: Մէլիքները քանի անգամ կը բողոքեն տաճիկ կառավարութեան, որ ի հարկէ անլսելի կը թողու այդ տեսակ բողոքները: Այդ ժամանակ իրենք՝ ասորաց մէլիքները անմիջապէս կը յարձակին քիւրդերու վրայ, աւելի շատ գիւղեր կաւերեն, կը թալանեն և կը նստեն քիւրդ գիւղերու մէջ:

Տաճիկ կառավարութիւնը, որ խուլ կը մնար ասորիներու բողոքներուն, վանէն զօրք ուղարկեց քիւրդերը կոտորող ասորիներու վրայ: Մէլիքները քաշեցան իրենց անառիկ լեռները և պատրաստեցան կառավարութեան դէմ կռուելու: Բայց սեպտեմբեր 11-ի վառայ յայտնի Դաշնակցական կռիւն խանգարեց ասորիների դէմ դուրս հանած զօրքի ընթացքը: Երկիւղ կրելով աւելի մեծ ընդհարումներէ, կառավարութիւնը անմիջապէս յետ կանչեց զօրքը, մի մասը մացրեց նորէն քաղաք, իսկ միւս մասը պարսկական սահմանագլուխը ձամբեց:

Դիար-Ախուրի ասորիները այսպիսով առժամանակեայ կերպով ազատեցան կառավարութեան վրէժխնդրութենէն:

Թ Ո Ւ Ի Յ Ի Կ Թ Ե Ր Թ

№ 5 Զ. Յ. Դ Ա Շ Ն Ա Կ Ց Ո Ւ Թ Ե Ա Ն № 5
28 Դեկ. 96 Վ. Ա. Ս. Պ. Ռ. Բ. Ա. Կ. Ս. Ն. Ի 28 Դեկ. 96
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԵԻ

Հ Ա Յ Ժ Ո Ղ Ո Վ Ո Ւ Ր Դ

Հայ արիւնին ծարաւի գազան Սուլթան Համիդ՝ անթիւ նահատակներու արիւնը խրմելէ յետոյ սկսած է բարենորոգումները գործադրել: Ով չգիտէր՝ թէ պարզ խաբեքայութիւններ են, որպէսզի միջոց ունենայ նոր սարսափներ ստեղծելու մեզ՝ թշուառ Հայերու համար: Կեղծ, խաբուսիկ բարենորոգումներու հետ՝ սուլթան սկսած է զինել շտապով և իր աչքի լոյս համիդականներ և մահմեդական մոլեռանդ ամբոխը: Նոր տուրքեր դրւած են տաճիկ ժողովրդի վրայ, խուժանը զինելու նպատակով և ահագին քանակութեամբ զէնքեր գընւած են արտասահմանի մէջ անոնց համար: Ասոնք են ահա արիւնարբու Սուլթանի իսկական ռէֆորմները:

Եւ այս բոլորը քեզ համար է, Հայ ժողովուրդ. քո ապագայ սարսափներու համար:

Միթէ կատաղի Մեծ-Ուճրագործը կարող է գութ ունենալ, միթէ մեր հայրենիքը սպանդանոց դարձնողը

և մեր արևմտյան հեղեղներ կազմողը կարող է խնայել իւր զոհին:

Ո՛վ են ապա այն կեղտոտ, հացկատակ հայ անուն կրող մարդիկ, որ կը վազեն գրկաբաց դէպի վայրագ դահճի սուտ խոստումները և առանց խղճահարուելու կը մտնեն ամեն տեսակ ստոր ու ցած պաշտօններու մէջ՝ մեր եղբայրներ կեղեքելու և մատնելու յոյսով:

Նոքա հայրենիքի և մեր բիւրաւոր նահատակներու գաւաճաններ՝ յաւիտենական նախախնայ դրոշմած իրենց անարգ ճակատի վրայ:

Անխղճ մարդիկ, դուք չէք արդարանար յեղափոխութեան առաջ:

Մեր կոիւր չէ վերջացած և կը շարունակուի աւելի կատաղի: Ազատութիւն կը գոռան մեր անմահ նահատակ ընկերները արեան հեղեղներու միջէն: Արէժ, վրէժ մեր բիւրաւոր զոհերու:

Մեր հարազատներու սուրբ արիւնը չդաւաճանենք, Հայ եղբայրներ: Սուլթանը մեզ հետ չի հաշտուիր՝ սուտ են իր խոստումները:

Եթէ ռուսները չորտային Սուլթանի գլխու վրայ, եթէ առիւծասիրտ Դաշնակցական հայդուկը իւր մահաոխի զնդակներով չսոսկացնէր թշնամուն՝ Հրէշը չի պիտի զիջանէր կեղծ բարենորոգումներն ընդունելու: Թող բոլորքուր մեր կոիւր և նա պիտի պարտաւորի մեր պահանջները իրագործելու:

Դիմենք մեր փրկութեան միակ միջոցին...

Ձէնք, զէնք: սա է մեզ փրկողը բոլոր սարսափներէն: Կոտորածներու ժամանակ ամեն մարդ զգաց զէնքի հրաշագործութիւնը: Ո՛չ ոսկին, ո՛չ հարստութիւն մերը չեն. յանկարծ նոր տագնապ ու ամեն ինչ կը խլեն մեզնէ մեր կեանքի հետ: Սարսափները չեն վերցուած, և ամեն րոպէ կարելի է վտանգ սպասել, իրական վտանգ:

Մեր վերջին լուսան չխնայենք ժողովրդի փրկութեան գործի համար:

Թշնամին օրհասական կատաղութեամբ կոիւ կը մըղէ մեր դէմ. զինուո՞նք մենք ալ և պատրաստ մնանք միշտ՝ զոհ չդառնալու վայրագ գազան Համիդի կատաղութիւններուն:

Վախ, միշտ կոիւ... ու ահա թշնամին ինկած է չարաչար: Դիւանագիտական խաղերուն երբէք ուշ չը դարձնենք:

Վ Ե Ր Զ Ի Ն Գ Ե Ռ Ա Պ Ի Ր Ն Ե Ր

— Երէկ, փետր. 21-ին բոլոր նաւապետների ժողովում վճռուում է կրակ բանալ միայն այն ժամանակ, երբ ապստամբները չհպատակեն իրենց պատուէրին և առաջ ընթանան դէպի Կանէա:

— Յունական զորքերը յարձակում են գործում տա-

ճիկ պահականոցների վրայ: Այդ ժամանակ նաւապետները վճռում են թնդանթներ արձակել: Առաջին թնդանթն արձակում է անգլիական նաւից. գերմանականը, լուստրիականը և ռուսականը հետևում են նրան:

Իտալական նաւը չի մասնակցել ուժագործման: Իտալական սպաները այցելել են յունական Հիդրա նաւը և խորին ցաւակցութիւն են յայտնել դէպքի առթիւ: Գերմանական նաւապետի հեռագրելով ուժակոծման առաջին նշան տուողն ինքն է եղել: Փա՛ռք իրեն:

Փետր. 22-ին Փրանսիական պարլամենտում հարցապնդման ժամանակ արտաքին գործոց նախարար Անտոն յայտարարել է, թէ Եւրոպան ընդունել կը տայ Յունաստանին իր կամքը, ինչպէս և կստիպի Տաճկաստանին ընթերցել ընդունելու:

— Գերմանական ընթերցում նախարար Մարշալը յայտնել է, որ ամենից առաջ պէտք է աշխատել խաղաղութիւնը պահպանել, այնուհետև Կրետէում կարգը վերականգնել և բաւականութիւն տալ յոյն ազգաբնակչութեան, որը կարելի է անել առանց ձեռնաժուկ լինելու Օսմանեան Վայսրութեան ամբողջութեան:

ՆԻՐՈՍԴՆԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅՈՒՅԱԿԸ

Պօրիսովկրատից 100ֆր.

Շումլայի «Աստղ» խմբից 5 ֆր.

Աղէքսանդրիայի սնդ. մէջ ստացւած են.

Յ. Ա-ից 16 դահեկան, Ար. Վ-ից 20 դհ., Յ. Կուտ-ից 8 դհ., Յով. Մ-ից 20 դհ., Տիրտեոսից 40 դհ., Աւետիս 5 դհ., Յ. Ա-ից 10 դհ., Յուլի 40 դհ., Յար. Մ-ից 10 դհ., Մասիսից 20 դհ., № 2 խմբից 60 դհ., Արդարասէր խմբից 30 դհ., Արշաճից 10 դհ., Առիւծից 12 դհ., «Դէպի Բաղդատ» խմբից 97 1/2 դհ., Շ-ից 48 3/4 դհ., ԱԺ-ից 20 դհ., Յար. Մ-ից 30 դհ., 3 գրքից 9 դհ., Գտնւած 1 1/2 դհ., Գ-էն 10 դհ., X-էն 5 դհ.

Սլիվէն քաղաքէն Սլիվէնի Օժանդակ կոմիտէի միջոցաւ ստացւած է Եամպոլի կոմիտէի սնդուկի մէջ 169 լէվ 90 սանտիմ:

Բատնէ-Մահալէի Հայրենասէր խմբէն 68լ. Քաջարի 80,40լ. Գրբան կայ. Առիւծ խմբէն 83լ. Հաքոօլօ քղ. համակրողներէն 16լ. Պօրիսովկրատ կայ. հայ պանդխ. 10լ. Հարմանլի կայ. պանդ. ազգայիներէն 18լ. Քարա-Պունար կայ. պանդուխտներէն 23լ. Թըրնօվա-Սէյմէն կայ. Սիրուն-Սիրաքէն 5լ. Բատնէ-Մահալէի հայ եղբայրներէն 10լ. Գումարը 322լ. 40ս.

Նոյն սնդուկի մէջ ստացւած են.

Քէրմէնլի կայարանի «Անձնուրաց» խմբի գանձանակէն 12 լէվ, Նոյն կայարանի «Անձնուրաց» և «Արծիւ» խմբէն 26 լէվ:

Բատնէ-Մահալէ կայարանի «Բաբէն-Սիւնի» խմբի գանձանակէն 93 լէվ 35 սանտիմ: Նոյն կայարանի «Հայրենասէր» խմբէն 20 լէվ, «Քաջարի» խմբէն 20լ. «Բաբէն-Սիւնի» խմբէն 18 լէվ, Հայ պանդուխտներէն 9 լէվ:

Նոյն տեղը ստացւած է Պուրկազի Աքքանազեան կոմիտէի միջոցաւ 200ֆր.

Խմբագրութեանս դիմել հետևեալ հասցեով՝

Rédaction du Droschak, Genève (Suisse)